# Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի պարտականությունները կատարողի 2023 թվականի մարտի 13-ի N282 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 7-ի N64-Ա- N65-Ա, 2023 թվականի մարտի 9-ի N66-Ա, 2023 թվականի մարտի 10-ի N67-Ա, 2023 թվականի մարտի 13-ի N68-Ա - N70-Ա որոշումների վերաբերյալ.

ՈՒսումնասիրությամբ պարզվել է, որ որոշումների մեջ օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսակետից առկա են հետևյալ թերությունները՝

1. N65-Ա որոշման բովանդակությունը չի համապատասխանում որոշման վերնագրին, բացի այդ որոշմամբ տրամադրված հասցեն չի համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետին։
2. N66-Ա որոշման դրույթներում կատարված հղումները անհրաժեշտ է գրառել որոշման նախաբանում, բացի այդ որոշման դրույթների համարակալումը սխալ է կատարված։
3. N67-Ա և N70-Ա որոշումների դրույթներում կատարված հղումները անհրաժեշտ է գրառել որոշումների նախաբաններում։ Որոշումների դրույթների համարակալումը սխալ է կատարված։ Որոշումների 6-րդ կետերը չեն համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջին։
4. N68-Ա որոշման նախաբանում հղումը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթին սխալ է կատարված։
5. N64 - N70 որոշումներում չի պահպանվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված վավերապայմանը։

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ